ՆՈՐ-ԴԱՐ

№ 10 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Զորեքշաբթի 29 Յունվարի **1886** Զորեքշաբթի 29 Յունվարի ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 10

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. հատով 5 կոպէկ։ Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нор-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

Թիֆլիսում

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1886 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Նոյն ուղղութեամբ և ծրագրով

(Երրորդ տարի)

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.
Եւրոպայի և Թիւրքիայի բաժանորդները վճարում են 30 Ֆրանկ։
Ուսանողները վճարում են՝ 10 րուբլի։
Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից։
Թիֆլիսում բաժանորդ ընդունվում միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։
Խմբագրատունը գտնվում է պօստատան հանդէպ, Տրոյիցկիյ փողոցի վերայ, Սամբրս (Տրօյցա) եկեղեցու հանդէպ, տուն № 9։
Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis (Caucase) Rédaction «Nor-Dar».

Խմբագիր—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Պէտք է շինե՞լ, թէ պէտք է քանդել.
Քրոնիկոն.—Լուրեր.
Թղթակցութիւններ.—Ղարաղալա։
Քաղաքական.—Բալկանեան գործեր։ Անգլիա։
Խառն լուրեր.
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Բանասիրական.—Անպատճառ իշխանուհի (վերջ)։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 28 Յունվարի 1886.

ՊԷՏՔ Է ՇԻՆԵ՞Լ, ԹԷ ՊԷՏՔ Է ՔԱՆԴԵԼ

II

Նախընթաց առաջնորդողից ընթերցողը իմացաւ նախ նշանաւոր մարդկանց յիշատակը յարգելու նշանակութիւնը մի ժողովրդի համար, յետոյ այն որ «Նոր-Դար»-ը դէմ չէ մեր ժողովրդի մէջ նշանաւոր մարդկանց յիշատակը մի որեւէ կերպով յաւերժացնելու ձեռնարկութեանը։

Որպէս զի ցոյց տանք, որ մենք իրօք դէմ չենք եղել Ներսէսի պատուին կամ յիշատակին նուիրած մի որեւէ ձեռնարկութեանը՝ կը յիշեցնենք մօտիկ անցեալից մի քանի դէպքեր մեր ընթերցողներին։ Այդպիսով մեր ընթերցողները կիմանան միեւնոյն ժամանակ թէ ինչպէս են վերաբերուել դէպի Ներսէսն այն մարդիկը, որոնք նրա անունը ձեռքին առած առանց պատկառելու իբրեւ զէնք մինչեւ այսօր էլ գործ են դնում մեզ դէմ։

Մի՞թէ մենք արգելեցինք կամ միրուէ գործով՝ դիմադրեցինք, որ մի 300 հազար րուբլիով հրապարակին վերայ չը վաճառուող շէնքը 600 հազարով անէին և Ներսէսի պատուոյն ընծայէին ս. Էջմիածնին։

Ի՞նչու չարեցին։ Ի՞նչու այնպէս անտարբեր գտնուեցան, ուր մնաց գործելու եռանդը։

Եթէ եռանդ կայ Թիֆլիսի առաջնորդարանը վերանորոգելու և նրան կահաւորելու վերայ մի քանի հազար ծախսելու, եթէ եռանդ կայ Վանաց մայր եկեղեցին—մի եկեղեցի որ Թիֆլիսին է վերաբերում—նորից կառուցանելու համար առնուազն 400 հազարի սմէտա կազմելու, ի՞նչու պակասեց այդ եռանդը ս. Էջմիածնին, ասել է ամբողջ ազգին մի շէնք նուիրելու ժամանակ, քանի որ այդ նուէրը Ներսէսի պատուին էր լինում, Ներսէսի՝ որին այնքան սիրում, պաշտում են և ինչպէս մեզ դէմ գրողների խօսքերից երեւում է, քիչ է մնում որ զոհէին նրան և՛ եկեղեցին և՛ ազգը։

Անցեալ 1884-ին հոկտեմբերի 28-ին էր, որ հեռագիրը գուժեց ազգին Ներսէսի մահը։

Մի՞թէ մենք դէմ էինք, որ ազգը իւր նշանաւոր մի անձի, սիրեցեալ Ներսէսի մահուան համար գէթ մի քանի օր սուգ պահէր, քաղաքիս գէթ նշանաւոր փողոցների վերայ գտնուող հայոց խանութները գէթ մի օր, նոյն իսկ կիւրակի Ներսէսի հոգեհանգստի օրը փակուած մնային։ Մի՞թէ մենք սոխլեցինք ներխականներին Ներսէսի մահուան գոյժը ստանալուց մի քանի օր յետոյ փառաւոր պարահանդէս տալու յօգուտ այս ինչ ընկերութեան Թիֆլիսի ժողովարանում։

Երբ մի փոքր իւր պատիւը ճանաչող ազգի մէջ մի նշանաւոր մարդ մեռնում է, և այդ մարդը ճշմարիտ սիրելի է ժողովրդին, նըրա համար սուգ են պահում, եկեղեցիներում աղօթում են, կանայք իրենց զարդերը վայր են դնում և սև են հագնում։

Ոչ ոք կարող չէ պնդել, որ հոգեհանգիստ կատարելը մի դժուար և անսովոր բան լինի մեզ հայերիս համար։ Քանի և քանի աննշան մարդկանց մահուան տարեդարձն է կատարվում։

Մի՞թէ մենք արգելեցինք Ներսէսի մահուան տարեդարձը ինչպէս վայել էր պարտ ու պատշաճ կերպով կատարելու...

Մենք այս եղանակով կարող էինք դեռ շարունակել, բայց հասկացողի համար այսքանս էլ բաւ է իմանալու համար այն՝ ինչ որ հարկաւոր է։

Եկէք խոստովանենք, որ մենք ոչ սիրել գիտենք և ոչ էլ ատել. մեր սէրն էլ, մեր ատելութիւնն էլ շինովի են. ինչպէս մեր ամեն գործերը, նոյնպէս և մեր զգացմունքը, մեր միտքը, մեր համոզմունքը ո՛չ տեւողութիւն ունին և ո՛չ էլ հաստատուն հիմք։

Եկէք խոստովանենք, որ տասը տասներկու թանկագին տարիների հետ մենք իբրեւ անմիտ, իբրեւ չար պատանիներ խաղացինք և կորցրինք նրանց։

Եկէք ցանկանք, որ Աստուած փրկէ մեր ազգը իւր անմիտ, անկոչ, նենգ առաջնորդներից։

Եկէք դաս առնենք անցեալից և միմեանց քանդելու տեղ միմեանց հետ հանրօգուտ գործերում մրցելով առաջ գնանք։ Եթէ կոյր նախանձը, եթէ անձնական կիրքը մեզ չէ թողլ տալիս այդ անելու, եթէ կոչումն չունինք առաջնորդելու ժողովրդին, թողնենք այդ ասպարէզը և չխանգարենք գոնէ ուրիշներին, որոնք կոչումն են զգում իրենց մէջ, կարողութիւն և եռանդ ունին՝ գործելու և հարկաւոր տեղը զոհուելու։

Անհրաժեշտ է, որ մենք մեր մնաս բարեւն ասենք վերջին տասնեակում մեր բռնած ընթացքին, եթէ կամենում ենք, որ մեր ժողովուրդը վերջապէս ճշմարիտ քաղաքակրթութեան ճանապարհը գտնելով առաջ ընթանայ։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ՏԱԹԵՒԻՑ մեզ գրում են.—«Մեր տաթեւու երբեմն հռչակաւոր և աթոռանիստ վանքը այսօր կատարեալ քայքայման մէջ է։ Ս. Սինոդը տարեկան 900 րուբլի փող է յատկացրել վանքին միաբանութեան ապրուստի համար, բայց այդ բոլոր գումարից միաբանութիւնը բնաւ չէ օգտվում։ Որովհետեւ վանքի մէջ միաբանութիւն ասած բանն էլ չը կայ նրանք ցրուել են այս ու այն կողմը։ Սիմէօն վարդապետը Մեղրու վանքումն է։ Ստեփան վարդապետը վիճակիցը չի վերադառնում վանքը. Ներսէս վարդապետն էլ վաղուց վանահօրից հեռացած գնացել իւր տունն է նստել։ Վիճակի պարզամիտ ժողովուրդը վանքը գալով և տեսնելով որ ոչ ժամասացութիւն կայ վանքում և ոչ կենդանութիւն՝ գայթակղվում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՊԱՏՃԱՌ ԻՇԽԱՆՈՒՀԻ *).

(Հայոց կեանքից)

Վերջ

Ժ.

Օրիորդ Լազարեանի և իշխան Շահմելիքեանի նշանադրութեան հանդէսը մի քանի օր առաջ տեղի էր ունեցել ոչ շատ շքեղ կերպով. բայց քաղաքի մէջ շատ էին խօսում նրանց հարսանիքի մեծածախ և փառաւոր պատրաստութիւնների մասին։ Վասիլ Իւանիչը իւր կողմից աշխատում էր ապացուցանել՝ որ կեանքի վայելչութիւնների մէջ փողի արիստոկրատիան կարող է մրցել արեան արիստոկրատիայի հետ. և թէ առատաձեռնութեան կողմից կապալառու Լազարեանը ոչնչով պակաս չէր իւր ազնուական փեսայից։ Իշխան Շահմելիքեանը ընդհակառակը չէր ընդունում այն միտքը թէ վաճառական մարդու նիստ ու կացը կարող է երբ և իցէ հաւասարուել իշխանական տան ապրուստի հետ, այդ պատճառով և ճգնում էր իւր հարսանեաց հոյակապ պատրաստութիւններով զարմացնել բոլոր աւետրական աշխարհը։

Վերջապէս հարսանեաց օրը հասաւ։ Գիշեր էր և գեղեցիկ լուսին. բայց Լազարեանների տունը ստուեր էր գցում այդ խեղճ լուսնի վերայ։ Նա լուսաւորուած էր շատ շքեղ և գրեթէ աչք շլացնելու չափ փառաւոր։ Դրսից նրան զարդարում էին հարիւրաւոր լապտերներ գոյնզգոյն կրակներով, իսկ ներսում վառվում էր ջահերի և ճրագների մի կատարեալ հրդեհ։ Երաժշտութիւնը, որ որոտալով թնդում էր ներսում, հաւաքել էր այդ տան չորս կողմը մի բազմաթիւ ամբոխ, որը հիացմունքով դիտում էր հարուստների ուրախութիւնը։

Իսկ տան մուտքի առաջ, ուր վառվում էին գազերէն ղամբարները, խըռնուել էր կառքերի և դեսպակների մի անհամար կոյտ։ Ոստիկանական պաշտօնեաները ջերմեռանդութեամբ հսկում էին այդտեղ կարգապահութեանը։

Գիշերուայ ճիշտ տասն երկու ժամին Լազարեանների փողոցը մտան իշխանական ընտանիքի քառալոյծ կառքերը, որոնց հետեւում էին բազմաթիւ փեսաւէրները իրենց բազմաթիւ կառքերով և դեսպակներով։ Իսկոյն երաժշտական խումբը դուրս եկաւ փողոցը (այդպէս էր ցանկացել Վասիլ Իւանիչը) և թանկագին հիւրերի գալուստը ողջունեց մի որոտաձայն և երկարատեւ տուշով։

Վերջապէս փայլուն նորեկները զուրս եկան և ցրուեցան հոյակապ դահլիճների մէջ, իւրաքանչիւրն իւր արժանաւորին տեղ ընտրելով իւր համար։ Բայց իշխան փեսային ինքը տիկին Լազարեանը առաջնորդեց դէպի իւր համար պատրաստած փառաւոր գահոյքը, որի վերայ արդէն բազմած էր օրիորդ Աննան իւր մեծափայլելուչ փառքով։ Երկու զոյգերն էլ արժանի էին միմեանց։

Իշխան Շահմելիքեանը, իւր վայելուչ հասակով, գեղեցիկ դէմքով, գեղագանգուր մազերով, ազնուական շարժուածքով և վերջապէս իւր նրբաճաշակ զգեստաւորութեամբ գերազանցում էր գրեթէ բոլոր հիւրերին։ Նրա տարիքով լինելը բնաւ չէր նշմարվում։ Աղջիկներից շատերը նախանձում էին Աննայի բաղդին, իսկ մանկամարդ տիկիններից իւրաքանչիւրը, միայն իրեն էր արժանի համարում այդ ազնուական իշխանի ամուսինը լինելու։

Օրիորդ Աննան ընդհակառակը երիտասարդների նախանձն էր շարժում։ Նրա գեղեցկութիւնը թէպէտ գերմնական չէր, բայց իւր վերայի հարստութիւնները նրան գերմնական էին դարձրել։ Նրա հագուստը որ կարուած էր սպիտակ, թանկագին մետաքսից և զարդարուած արուեստական հարուստ ծաղիկներով, ֆրանսիական ճարտարութեանց մի կատարեալ հրաշակերտն էր ներկայացնում։ Նրա գլխի խոպոպները ու հիւսերը, մարմարեայ կուրծքը և փափկիկ դաստակները զարդարուած էին հարիւրաւոր ադամանդներով, որոնք բիւրեղեայ ջահերի առաջ ցոլում էին աջ ու ձախ բիւրաւոր կայծեր ու շողեր։ Բոլոր աչքերը նայում էին նրան, բոլորի աչքերը շլացած էին նրանով։

Մի քանի երաժշտական նուագներից և թեթեւ պարերից յետոյ, որոնք տեղի ունեցան ի պատիւ նորեկ հիւրերի, սկսան կատարել հանդերձ-օրհնէքի կարգը, որին մասնակցում էին բազմաթիւ քահանաներ իրենց երգիչներով և դպիրներով։ Իսկ մի ժամից յետոյ արդէն իշխանական զոյգը շրջապատած բազմաթիւ հիւրերով, գործվում էր արիստոկրատների եկեղեցում, ուր խորախտաձայն Տէր-Մուշեղը հանդիսաւոր եղանակով հարցաքննում էր նրանց.—«Որդեակ իմ, մինչեւ ի մահ տէր ես». և կամ «Որդեակ իմ, մինչեւ ի մահ հնազանդ ես» և պատասխան առնում մի «Այո» և մի բազմիմաստ գլխի շարժում...

Եկեղեցուց վերադառնալուց յետ հարսանեաց հանդէսը կատարեալ կերպարանք առաւ. երաժշտութիւնը նոր ուժով սկսաւ թնդալ, պարերը նորից կենդանութիւն առին, հարսը և փեսան ասպարէզ մտին, հարսնաւէրք և փեսաւէրք միմեանց խառնուեցան, գրկեցին, գրկուեցան և մի կէս ժամուայ մէջ կապալառու Լազարեանի տունը կիթերական դիցուհւոյ տաճարը շինեցին։

Վասիլ Իվանիչն ու Մարիա Սերգէևնան անընդհատ շնորհաւորութիւններ և բարեմաղթութիւններ էին ընդունում և ուրախութիւնից քիչ էր մնում որ դժուէին։

Այսուամենայնիւ սեղանների բացուելն ու ընթրիքի սկսուիլը ամեն տեսակ ոգեւորութիւն մի առ ժամանակ չափաւորեցին։ Թէ հրաւիրեալները և թէ հրաւիրողները ընթրիքի նստան, յարգելով ստամոքսի իրաւացի պահանջը։

Բայց ինչպէս Լազարեանի տան մար-

*) Տես «Նոր-Դար» № 8.

և յուսահատվում է։ Այս տխուր իրողութեանց վերայ հրավիրում ենք բարձրագոյն հոգևոր իշխանութեան բարեհաճ ուշադրութիւնը։

—

Մեզ գրում են.—Թիֆ. 5-րդ մասում, Մուխրանսկի փողոցի վերայ գտնվում է մի մանրավաճառ Թիւրքի կրպակ։ Ցունվարի 24-ին ուրբաթ օրը, ժամի 4-ին մի իննը տարեկան աղջիկ գնում է այդ կրպակից բան առնելու։ Թիւրք մանրավաճառը այդ աղջկանը խաբելով տանում է կրպակի մի ծածուկ տեղ և սկսում է նրան չարչարել բռնաբարելու դիտաւորութեամբ։ Հէնց այդ միջոցին մի կին գնում է կրպակից բան առնելու։ Միւս Թիւրքը որ այդ բանի վերայ հսկում է եղել, տալիս է կնոջն նրա ուզածը· հէնց այդ միջոցին լըսվում է խեղճ աղջկայ ձայնը, կինը ուզում է իմանալ Թէ այդ ինչ բան է, Թիւրքը չէ Թողում երբ կինը զոռով ուզում է ներս մտնել որ տեսնի, այն ժամանակ Թիւրքը կնոջ երեսը արիւնլուայ անելով յետ է մղում։ Կինը այդ դրութեան մէջ օգնութիւն է կանչում։ Իսկոյն հաւաքվում են մարդիկ· գալիս է ոստիկանութիւնը հէնց այն ժամանակ, երբ գազանաբարոյ Թիւրքը դեռ բռնաբարած չի լինում։ Իսկոյն կողպում են կրպակը և յանցաւորներին տանում են ոստիկանատուն։ Այդ մասին քննութիւն է բացուած։

—

Աթոնի (Թիւրքիայում) լերան վերայ գտնվում է մի հինաւուրց վանք, որը դեռ XI դարուց պատկանում էր վրացիներին և որի մէջ ապրում էր երկու սեւի կուսակրօններից բաղկացած վրաց միաբանութիւն։ Շատ ժամանակ չէ որ յոյն հոգևորականները այդ վանքը խլեցին վրացիներից և իրենց սեպհականացրին։ Չը նայելով, որ քառասուն հոգուց բաղկացած Աթոնի վրաց միաբանութիւնը շատ ջանքեր գործ դրեց և այժմս էլ գործ է դնում, բայց մինչև այժմ չը կարողացաւ իւր սեպհական վանքը ազատել իւր համադաւանակից յոյն հոգևորականներից։ Ներկայումս գործը ուրիշ կերպարանք է ստացել։ Վրաց միաբանութիւնը իւր անդադար աշխատութեան շնորհիւ, կարողացել է յիշեալ գործը հասցնել ռուսաց Կայսեր ականջին և Կայսրը բարեհաճել է իւր առանձին ուշադրութիւնը դարձնելու այդ գործի վերայ։ Միւս կողմից Թիֆլիսի և Քութայիսի ազնուականութիւնը ընտրել է մի պատգամաւորութիւն, ռուս կառավարութեանը միջնորդելու այս գործի մասին։ Պատգամաւորութիւնը կազմում են Մինգրելսկի, Նակաշիձէ, Աբաշիձէ-Գօրլէնկօ իշխանները, Պետերբուրգի համալսարանի պրօֆէսսոր Ցագարելին և աստիճանաւոր Զաւրիևը, որոնք արդէն կառավարութեան ներկայացրել են դօկու-մէնտներ, որոնցից երևում է որ յիշեալ վանքը պատկանում է Ռուսիային։ Պատգամաւորութեանը օգնում է և Թիֆլիսի նահանգի ազնուականութեան առաջնորդ իշխ. Բագրատիօն Մուխրանսկին, որը ներկայումս գտնվում է Պետերբուրգում։ Ներկայումս, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, ռուսաց ս. Սինօդում եռանդով քննվում է այդ հետաքրքիր գործը։ Մինչդեռ վրացիները դիմել են ռուս կառավարութեան օգնութեան և սպասում են իրենց վանքի յետ ստանալուն, Աթոնի յոյն միաբանութիւնն էլ իւր կողմից դիմել է անգլիական կառավարութեան և խնդրում է որ նա այդ վանքը յոյն միաբանութեան հետ միասին իւր հովանաւորութեան տակն առնի։ Թէ ինչպէս կը վերջանայ այդ կրօնական—քաղաքական գործը, այդ ցոյց կը տայ ապագան։

—

Այս օրերս «Каспій» լրագրի ասելով, 15 ուղտերից բաղկացած մի կարաւան եկաւ Սև-Քաղաքը և կերօսին գնելով և տիկերի մէջ լցնելով, ճանապարհ ընկաւ շրջակայ գիւղերում կերօսինը ծախելու։ Կարաւանը անցնելով մի քանի վերստ, Շամախու ճանապարհի վերայ կանգ առաւ հանգստանալու քարվանսարաներից մէկում։ Այդտեղ ուղտապաններից մէկը կամեցաւ չիբուխը ծխել և հրահանից դուրս ցայտող կայծը ընկնելով կերօսինով լի տիկերից մէկի վերայ, յանկարծակի բոց բարձրացաւ, որը անցնելով միւս տիկերին՝ առաջացաւ հրդեհ։ Բոլոր 15 ուղտերը բռնաւորուած կերօսինով և ուրիշ ապրանքներով հրդեհի զոհ դարձան. մարդիկ միայն կարող ացան ազատուել։

—

Թիֆլիսի նահանգի Թիւրքական Սագանլուղ գիւղում, յունվարի 25-ին, կալանաւորուել է յանցաւոր Ալապկեար Եար-Օղլին, որը Սիբիրից փախել էր և Թագնուել իւր ազգականի մօտ։ Թիֆլիսի գաւառապետի կարգադրութեամբ յանցաւորին ուղարկել են Մետեխի բերդը. Նրա հետ եա բռնուած է նրան Թագցնող Տօվարիկ-Ալակէր-Մահմեդ-Օղլին։ Ինչպէս լսում ենք, ասում է «Нов. Обоз.» Թերթը, մի և նոյն գիւղում գտնվում է մի ուրիշ յանցաւոր, նոյնպէս փախած Սիբիրից։

—

Կառավարչական կարգադրութիւնից իմանում ենք, որ սոյն Թուի յունվարի 22-ին Բալտայում (Թերեկ. նահ.) բացուել է հեռագրական կայարան, իսկ Կազբէկեան պօստային հիմնարկութեան մէջ (Թիֆ. նահ.) հեռագրական կայարանի բաժանմունք, ուր ընդունվում են արտաքին Թղթակցութիւնների հեռագիրները։

—

«Վիօնգօ» անուն ֆիրմայով գործատանը, որ պատրաստում է ծծմբաթթու, այժմ արդիւնաբերում է «Каспій» լրագրի ասելով, մօտաւորապէս 3,000 պուդ ծծմբաթթու իւրաքանչիւր ամիս։ Ծծմբաթթուն գերադասվում է բոլոր տեղական կերօսին արդիւնաբերող գործարաններին և պուդը ծախվում է Բագւում 95 կոպ. մինչև 1 ր.։

—

Բագուից մինչև Բաթում նաւթի՛ անցք չինելու և ռուսական նաւթի նշանակութիւնը բարձրացնելու համար յարուցած հարցը ինչպէս կարդում ենք յուն. 16-ին, Պետերբուրգում կայացած կոմմիսիայում վերջացաւ։ Այդ կոմմիսիայում քննուեցաւ նաև նաւթի արդիւնաբերութեան և նրա անցքի վերաբերեալ մի քանի Թերի մնացած հարցեր, որոնց առաջարկել էր պրօֆեսսոր Կ. Ի. Լիսենկօն։ Լիսենկօյի ասութեամբ Բագուի նաւթը կարող է սպառել և նրա համար անցք չինելը ձեռնտու չէ, սակայն Մ. Ի. Լազարևը, որը իւր մի զեկուցումով բացեց նիստը, հակառակ Լիսենկօյի կարծիքին, ապացուցանելով, որ Բագուայ նաւթի սպառելու պատճառը կարող է լինել միայն նիւթական միջոցները և նրա արդիւնաբերողների դրամական պակասութիւնը, իսկ ինչ վերաբերում է նաւթի անցք չինելուն, դա շատ կարևոր է, որովհետև կը ծառայէ ընդհանուրի օգտին, միայն Թէ այդ ձեռնարկութիւնը ունենայ նիւթական միջոց։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, որին մասնակցում էին Լ. Նօբէլը, Ի. Մեզվելէվը և այլք, ձայների մեծամասնութեամբ հաւանութիւն ցոյց տուեցին Լազարևի կարծիքին, ապացուցանելով, որ վիրոյիշեալ քաղաքների մէջ նաւթի անցք չինելը շատ կարևոր է։

—

Օդեսսայի յունական դեսպանատան ստացուած է յունական կառավարչութիւնից հրաման յունական կանչելու յունական նորընտիր Թնդանօթաձիգ զինուորներին, 22-ից մինչև 26 տարեկան, որոնք գտնվում են Ռուսիայում և շուտով ուղարկել Յունաստան։ Յունական դեսպանը, ինչպէս հաղորդում է «Одес. Вѣст.» լրագիրը, ընդունեց շուտով ի կատար ածելու այդ հրամանը։

—

Յայտնի է, որ դեռ 1883 թ. յուլիսին Թիֆլիսի քաղաքային խորհրդարանը պէտք է կարգի գցէր այն գործերը, որոնք ազատուել էին հրդեհից։ Այժմ խորհրդարանի կազմած ազդարարութիւնից երևում է, որ հրդեհի ժամանակ ոչնչացել են 628 գործ, այսպէս 1870 Թուին—2 գործ, 1871—4, 1872—3, 1873—5, 1874—9, 1875—31, 1876—37, 1877—24, 1878—43, 1879—132, 1880—30, 1881—186, 1882—25 և 1883—97 գործ։ Բացի սրանից հրդեհից ոչնչացել է ամբողջ արխիվը, որի մէջ եղել են ոչ Թէ միայն առաջուայ գործերը, այլ և 1870—1875 թ. գործերը։ «Кав.»

—

ԶՄԻՒՌՆԻԱՑԻՑ Կ. Պօլսի հայ Թերթերին հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները։

—Նոր տարւոյն առաջին օրը գաւառիս Լատինաց Առաջնորդ գեր. Ա. Թիմօնի այցելութեան եկաւ յազգային Առաջնորդարան և յոյժ սիրալիր կերպով ընդունուեցաւ մեր Առաջնորդ Ամեն. Մելքիսեդեկ Սրբազանէն։ Գեր. Թիմօնի այլ և այլ գեղեցիկ յատկութիւններով օժտեալ ընտիր եկեղեցական մ'է, շատ համակրութիւն ունի հայոց վերայ և մեծ բարեկամութիւն Մելքիսեդեկ Սրբազանի հետ։

—Ս. Ծննդեան օրն Ամեն. Մելքիսեդեկ Սրբազան հանդիսաւոր պատարագ մատոյց և միւռոն Թափի ժամանակ գեղեցիկ քարոզ մը խօսելով ժողովրդեան հոգևորապէս մխիթարեց։ Հակառակ օդին գէշութեան խուռն բազմութիւն մը կար եկեղեցին։ Աւարտումէն ետքը պաշտօնական մարմինք ինչպէս նա և բարձր դասու պատկանող ազգայինք Առաջնորդարան երթալով Ս. Ծննդեան տօնը շնորհաւորեցին Ամեն. Առաջնորդ Հօր։

Հետևեալ օրը մեկնեցաւ Յունաց Ս. Առաջնորդն իւր փոխանորդէն և վարչական խորհրդոյ անդամոց միոյն հետ այցելութեան եկաւ յԱռաջնորդարան։ Վերջապէս Նոր տարւոյ և տօներուն առթիւ կառավարութեան պաշտօնական անձինք և բոլոր հիւպատոսք կամ իրենց Թարգմանները և կամ այցաքարտերը ղրկեցին մեր Ս. Առաջնորդին։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂԱՐԱՂԱԼԱՑ։ Նախ և առաջ կարդացողից ներողութիւն կը խնդրեմ, որ Թողութիւն էնէ ու վրես չը ծիծաղի Թէ ինչ կոպիտ լեզվով բան է գրել։ Պէտքէ գիտենաք որ ես շատ գրագէտ չեմ. իմ կարպետս ջրէն հանողներէն եմ։

Մեր գեղը—Ղարաղալէն չինվեցաւ վերջին պատերազմէն ետև 1883 Թվին Ղարսայ սահմանի մէջը։ Մենք բոլորս էսսեղից գաղթած հայ-աւետարանականներ ենք, բայց ուրիշները մեզի ֆարմասօն կըսեն, որ ես չեմ հասկցել Թէ ինչ ըսել է։ Ինչ էլ կուզէ էղնի ես էդ անունից չեմ նեղանայ, որովհետև մենք օխտը հաւատից դուս մարդիկ ենք։ Էս բոլէխս մեր մէջը լուսաւորչական, բողոքական, պրիգուն և մինչև անգամ հրէայ ու անկըրօններ կան։ Էստից ի զատ ինչ տեսակ անկարգութիւն ըսես մեր մէջը կը գտնուի—նախանձութիւն, չարութիւն, իրար ոտի տակ սապօն դնել, իրար վերայ ծիծաղել, իրար ղրկել ու էլի էսպէս շատ բաներ։

Մէկ քանիսն էլ կան, որ խռովել են ժողովարան չեն գալ ու գեղի ոչ մէկ գործին չեն խառնվի. մէկ քանիսն էլ կսեն Թէ, որ ձեր վարքն ու բարքը էս էր, ինչի խալխին պատճառ դարձաք աշխարքի մէջ անուններս կոտրելիք—խայտառակ էրիք։ Մէկ քանին էլ զարունը նորէն գնացին իրենց գեղերը ու մէկ քանին էլ զարուն գալուն կսպասեն որ էրթան։ Մէկ խօսքով հիմակուց հիմայ մեր գեղը բանի նման չէ, քանի որ մէջներս անհամաձայնութիւն կայ. և յոյս էլ չկայ որ մենք նորէն իրար հետ լաւ էղնինք, որովհետև ամենքս մէկ գաղափարի ծառայող մարդիկ ենք ու իրար դժուար կը հասկանանք... մանաւանդ որ քանի էդ անպիտան պրիգուները մեր մէջն են, մենք ոչ կարգով դրացութիւն կարող ենք էնել, ոչ էլ միամիտ սրտով հաւատներիս հաստատ մնալ. որովհետև միշտ մեր ջահել տղայքը կը խաբեն գլխից կը հանեն—կրօնափոխ կէնեն։ Էդ պատճառով էլ մեր մէջը խռովութիւնը միշտ անպակաս է։

Էն մարդիկը, որ առաջուց հոգով ու սրտով կպան ու պատճառ էղան մեր գեղը չինելուն, հիմայ էնոնք կստա-

---

դիկը այնպէս էլ դուք, իմ սիրելի ընԹերցողներ, ևսկի չէք հարցնում, Թէ բաս ուր մնացին մեր խելօք Վարդուհին ու սիրահար Մարութեանը։

Պատիւ ունիմ յայտնելու, սիրելի բարեկամներս, որ նրանք էլ հէնց այս երեկոյ պսակուեցան մայր եկեղեցում։ Բայց նրանց հարսանիքը փառաւոր չէր, նրանք մեծ պատրաստութիւններ, հարուստ լուսաւորութիւն, բազմաթիւ հիւրեր, մեծածախս սեղան և այլ այս տեսակ բաներ չունէին։

Եկեղեցին եկան միայն Վարդուհին և Մարութեանը. նրանց մայրն ու խաչեղբայրը և Վարդուհու մի երկու զըւարիկ սիրունիկ ընկերուհիները։

Տէր Ղևոնդը մի տիրացուի և մի ժամկոչի օգնութեամբ պսակեց նրանց և յետոյ բոլորը միասին կառք նստեցին և գնացին Վարդուհու մօր պատրաստած համեստ ընթրիքը վայելելու։

Սեղանի վերայ տէրտէրը մի քանի լաւ հայերէն երգեր ասեց, փեսայ Տիրանն ու տիրացուն էլ իրենց գինեցածից մի մի բան երգեցին և այսպէս ամեն բան առանց ղալմաղալի վերջացնելով իւրաքանչիւրը իւր տունը գնաց։

Տիրանն ու Վարդուհին արդէն Մարֆէսի գիւղումն էին, երբ իշխան և իշխանուհի Շահմելիքեանները դեռ նոր դուրս էին գալիս Լազարեանների տանից և բազմաթիւ կառքերի ընկերակցութեամբ գնում էին իշխանի ապարանքը։

Բայց սրանով ի հարկէ դեռ չէր վերջանում իշխանական հարսանիքը։ Իշխանը և իշխանուհին պսակուելուց յետոյ միայն սկսան իրենց և երեք օր շարունակ զանազան խնճոյքներով, Թեամբ հացկերոյթներ և երեկոյթներ ունէին նրանք իրենց ապարանքում։

Ամբողջ քաղաքը այդ միջոցին զբաղուած էր Լազարեաններով և Շահմելիքեաններով. բայց ամեն տեղ նրանց վերայ էին խօսում, նրանց համար պատմում և նրանց լսում։

Վարդուհու ու Մարութեանի վերայ գրեԹէ ոչ մի տեղ խօսք ու զրոյց չը կար։

ԺԱ.

Հարսանեկան հանդէսներից յետ հասան հանգստութեան ժամերը. բայց իշխան Գրիգորը կարծես խուսափում էր իշխանուհուց։ Նա Թողնում էր նրան միայնակ իւր առագաստում, իսկ ինքը քաշվում էր իւր ննջարանը, միայնակ քնանալու համար։

—Քո վարմունքը շատ օտարոտի է Թւում ինձ, Միխա, նկատեց մի առաւօտ իշխանուհին իւր ամուսնուն, դու ինձ միայնակ ես Թողում իմ ննջարանում և ես ամբողջ գիշեր քնել չեմ կարողանում...

—Ինչո՞ւ, հոգիս, միթէ դու վախենում ես միայնակ քնելու

—Ոչ, ես անհանգստանում եմ, ես կարծում եմ Թէ... դու ինձ չես սիրում... այնպէս է, հա, դու ինձ չես սիրում։

—Ա՛, միթէ կարելի է այդպէս մըտածել, Անիչկա, ընդհակառակը քեզ շատ սիրելուս համար է՝ որ այս զոհողութիւնը ես յանձն եմ առնում... Ես չեմ գալիս քեզ մօտ, որպէս զի այս քանի օրերում քո ունեցած յոգնածութիւնը հանգիստ քնանալով անցնէ։

—Ոչ, ես այդ չեմ կամենում, ես յոգնած չեմ, ես կամենում եմ որ դու ինձ մօտ լինես, ժպտալով պատասխանեց իշխանուհին և ձեռքը ամուսնու պարանոցով պատելով սկսաւ քնքշաբար շոյել նրա գեղեցիկ զանգուրները, որոնց այնքան շատ սիրում էր ինքը։

—Շատ լաւ, հոգեակս, ես այսուհետև այլ ես բացակայ չեմ լինիլ քո սենեակից, եԹէ դու այդպէս ես կամենում, ասաց նրան իշխանը և անցաւ ուրիշ հարցերի։

Բայց առաջիկայ գիշերն էլ նա Թողեց իշխանուհուն միայնակ։ Խեղճ Աննան սրտնեղութիւնից տանջվում էր։ Սկզբում նա ցանկացաւ մտնել իւր ամուսնոյ ննջարանը և կշտել նրան իւր նկատողութիւնը՝ և այս անգամ աւելի յանդիմանական եղանակով, բայց յետոյ մտածեց դեռ մի փոքր էլ սպասել։ Ուստի անցկաց օրերի նման ժամանակը սպանելու համար նա սկսաւ կրկին քննել իւր ննջարանի հարուստ կարասիները, Թանկագին զարդերը, իւր սեփական առագաստը, նրա փնջազարդ փարադայրները և այլ բազմաթիւ ճոխութիւնները, որոնց տեսքը միայն պարարում էին իւր աչքերը։ Երկար նա նայում և զննում էր նրանց, չը նայելով որ սա առաջին անգամը չէր. սակայն իշխանը դարձեալ չէր երևում։

—Անկարելի է որ նա սիրում չը լինի ինձ, ինքն իրեն մխիթարում էր Աննան. եԹէ այդպէս լինէր, ուրեմն ինչն էր ստիպում նրան ամուսնանալ ինձ հետ, ինչու համար նա այնպիսի հարուստ ննջարան կպատրաստէր ինձ համար. ինչո՞ւ այնպիսի մեծածախս հացկերոյթներ ու երեկոյթներ կը սարքէր... չէ. անկարելի է, նա ինձ պաշտում է, նա այդ խօսքերը մի քանի անգամ ասել է ինձ...

Բայց իշխանը դարձեալ չէր երևում...

Իշխանուհու անհանգստութիւնը փոխվում էր յուսահատութեան։

—«Վերջապէս էլ սպասել անկարելի է, նա ինձ անպատվում է...» մտածեց իշխանուհին և զայրացած ներս վազեց ամուսնու ննջարանը։

—Ա՛խ Միխա, դու ինձ տանջում ես... բացագանչեց նա և հէնց պատրաստվում էր ամուսնու գիրկը ընկնելու, երբ մի օտարոտի պատկեր կանգնեցրեց նրան ճանապարհի մէջ անդամ։

Ամուսնու տուալէտի մօտ կանգնած էր մի մարդ բոլորովին մերկ գլխով, ներս ընկած ծնօտներով ու կիսահան հագուստով, և ձեռքի մէջ մի ինչ որ բան բռնած մաքրում էր խոզանակով։

—Ա՛, այդ դո՞ւ ես, Անիչկա, խօսեց կանգնած մարդը մի փոքր շփոթուած, երևում է դու էլի բարկացել ես ինձ վերայ, ես իսկոյն պիտի գայի քեզ մօտ...

բեալ զգլխացած են և միշտ արտունջ կէնեն իրենց վիճակէն... ինչպէս կերևի՝ յոյս կայ որ էտոնք էլ նորէն շուտով ետ պիտի երթան... Ամօթն ու պատկառանքը լաւ բան է եղբայրներ՝ էդ զխատւորութիւնը մաքրէդ՝ հանեցէք ու տեղերդ ծանր կեցէք, որ նորէն աշխարք մեղի՝ վերայ չը ծիծաղի։

Ձեր միտքը ինձի շատ լաւ յայտնի է ու դուք ոչ մէկ բանէ չէք ամչնար, որովհետև քանի քանի անգամ, ինչպէս կատուն ձագը բերանն առած ման կուգայ, դուք էլ ձեր ընտանիքով այնպէս սովորած էք անգամըմ էստեղից էնտեղ փոխվիլ։ Մտածեցէք որ 30—35 տան արունքը ձեր փորն է. նոցա տնից տեղից ու ամէն բանից զրկվելու պատճառը դուք էք։ Այդ զրկուածներից մէկն էլ ես եմ... որ ամեն անգամ օտար քարողիչը գեղը գալուն թէև մուխը քթէս դուս կուգայ, բայց իմ էրածս սխալն է ու ջանս դուս գալով պիտի քաշեմ, մինչև տեսնենք վերջերս ինչ կէղնի...

Ես շնորհակալ եմ իմ ծանօթներէս ու բարեկամներէս, որ միշտ կըսեն թէ նորէն դարձի հայոց եկեղեցու գիրկը. բայց մէնակ ինձնով ինչ կէղնի։ Ամենէն լաւն այն է, որ մեր նոր վեհափառ հօգեոր Տէր Մակար կաթողիկոսը միտք դարձնէ մեզի վերայ, լաւ լաւ քարոզիչ վարդապետներ ու տէրտէրներ զրկէ մեր մէջը. գան քարոզեն, խրատեն ու վերջն էլ եկեղեցի շինել տան և մէկ գիտուն-հովուապետ տէրտէր էլ տան որ մեզի կառավարէ։

Հայ—Աւստրիական։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

«Daily News» լրագրի թղթակցի տեղեկութեամբ, լորդ Սալիսբերիի և իւր մինիստրութեան պաշտօնաթող լինելու լուրը մեծ վրդովմունք պատճառեց Աթէնքում։ Ամեն տեղ և ամեն շրջաններում խօսում են պ. Գլադստոնի մասին։ Փողոցով անցնելիս լսում ես հետևեալ խօսքերը. «Անգլիական մինիստրութիւնը ընկաւ» և այդ խօսքերը այնպիսի մի տօնով են արտասանում, որը յայտնում է աթէնացու այն խօսքերը, թէ «փիլիպոս մակեդոնացին մեռաւ» որի մահուամբ կարծես թէ Յունաստանը ազատութիւն պիտի ստանայ։ Այսպէս էլ այժմեան յոյները յոյս ունին, թէ Գլադստոնը կանգնելով գլուխ և պետ անգլիական մինիստրութեան, յունական հարցը և նրա պահանջները չի թողնիլ առանց մի որ և է հետևանքի։

—

Կ. Պօլսի մեծ պետութիւնների ներկայացուցիչները խորհուրդ տուին Բ. Դրանը չ'սկսել Յունաստանի հետ ծովային ընդհարում և պատերազմ։ Պետութիւնները արդէն վճռել են Յունաստանի ծովային յարձակման դէմն առնելու, ուստի Թիւրքիան էլ, ինչպէս մի հզօր պետութիւն ցամաքի վերայ, քան թէ Յունաստանը, պիտի արհամարհէ Յունաստանի կողմից անելի պատերազմական գործողութիւնները, մինչև որ Յունաստանը բացարձակ յարձակմունք չանէ Թիւրքիայի դէմ։

—

«N. F. Presse»-ը հաղորդում է թէ՝ Բ. Դրան և իշխան Ալէքսանդրի մէջ կայանալի համաձայնութեան ծրագիրը հետևեալն է. 1) Իշխան Ալէքսանդրը սուլթանի կողմից հինգ տարի ժամանակով ներկայացուցիչ կը նշանակուի Արևելեան-Ռումէլիայում։ 2) Որովհետև բօլղարական իշխանին արգելուած կը լինի մնալ Ֆիլիպպօպօլսում, ուստի սրան կը փոխարինէ մի ուրիշը, որին կ'ընտրէ ինքը իշխանը և կը հաստատէ սուլթանը։ 3) Իշխանը ստանում է «մուշիրի» տիտղոսը և կը գնայ Կ. Պօլիս յայտնելու սուլթանին իւր շնորհակալիքը։ 4) Բօլղարիան պարտաւորվում է ճշտութեամբ հատուցանել իւր հարկը։ 5) Թիւրքիան կը գրաւէ Բուրգաս քաղաքը և կը դնէ այնտեղ բերդապահ զօրք, որը կը գտնուի բօլղարական իշխանի անմիջական իրաւանց ներքոյ։ 6) Բօլղարիան զիջումն է անում Թիւրքիային մի քանի սահմանական գիւղեր։ Մնում է վճռելու և երկու դժուար հարցեր, այն է՝ իշխանը պահանջում է Թիւրքիայից ներմուծելու Ռումէլիայի մէջ բօլղարական սահմանադրութիւնը և միաւորելու բանկվական և բօլղարական հեծելազօր գնդերը, սակայն Թիւրքիան այս վերջին առաջարկութեամբ չէ համաձայնում, միայն յոյս կայ, որ երկու կողմերն էլ շուտով կը կայացնեն համաձայնութիւն։

—

ԱՆԳԼԻԱ։ Ինչպէս երևում է Անգլիայի նոր ազատական մինիստրութիւնը երկարատև չի լինիլ։ Բերլինի և Լօնդօնի լրագիրները համոզուած են, որ Գլադստոնի մինիստրութիւնը չի կարող 'ի կատար ածելու բոլոր այն ամենը, ինչ որ պահանջում են Պարնելի կուսակիցները։ «Standard» լրագրի տեղեկութեամբ, Գլադստոնը Սալիսբերիից աւելի կարճ ժամանակ կը մնայ իւր պաշտօնում Գլադստոնին յաջողուեցաւ վայր ձգելու պահպանողական մինիստրութիւնը միայն պատճառով, որ ազատականներին օգնեցին իռլանդական պատգամաւորները և որոնք պատրաստ են հրաժարուելու և այդ կուսակցութիւնից, եթէ հաստատ իմանան, թէ Գլադստոնը փաստօրէն չի իրագործիլ իւր խոստումները։ Լուրեր են տարածուել որ իբր թէ Պարնելի և Գլադստոնի մէջ համաձայնութիւն է կայացել, որով պարնելականները խոստացել են ամեն դէպքում պաշտպանութիւն ցոյց տալ Գլադստոնին, եթէ միայն նա կը խաղաղացնէ Իռլանդիայի և Անգլիայի մէջ եղած քաղաքականութիւնը։ «Fremdenblat»-ի տեղեկութեամբ, Պարնելի և Գլադստոնի մէջ կայացած համաձայնութիւնը երկար չի տևիլ և անհիմն է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բոյսերի գաղթականութիւնը։—Շատ բոյսերի մենք հանդիպում ենք բոլորովին պատահմամբ։ Նրանք երբեմն ընդունելով կլիման աճում են բայց կարճ ժամանակով և յետոյ նորից ոչնչանում են։ Բոյսերի գաղթականութեան գլխաւոր պատճառներից մէկը ոչխարի բուրդն է, որի հետ խառնը այդ բոյսի հունդերը տարվում և տարածվում են զանազան հեռաւոր տեղերում։ Bulletin de l'Institut d'Essex-ը այդ մասին շատ ապացոյցներ է առաջ բերում։

Մասսաչուզետսի բրդէ գործարանները աշխարհի ամեն ծայրերից բուրդ է ստանում, ինչպէս օրինակի համար, Հարաւային-Ամերիկայից. Բարեյուսոյ հրուանդանից, Աւստրալիայից, Փոքր-Ասիայից և Եւրոպայի ամեն կողմերից. Ռուլլիամ Ալկօտտը Մասսաչուզետսի հիւսիսային նահանգում Լօուէլ (Lowel) քաղաքի մօտ գտնուած բրդէ գործարաններում քննել ու հետազօտել է բուրդը։ Այստեղի բուրդը գլխաւորապէս ստացվում է Կալիֆօրնիայից, նա հարուստ է իւր բազմակողմանի և ամեն տեսակ խառնուրդներովը, որի մէջ գտնվում են մեծ մասամբ երկու տեսակ ծակող և փշաձև հունդեր, այն է Xanthium stumarium, որոնցից մինը գործարանում կոչվում է Mestizoes և զսպանակաձև եղջիւրներ (Medicago denliculata) իսկ այնտեղ այդ երկու հունդերը միասին կոչվում են Alfacas· Բոլոր այդ աւելորդ խառնուրդները բրդից ջոկելով, ածում են փոսերի մէջ, ուր թողնում են նաև բրդի կեղտոտ լուացքաջուրը։ Փոսերում այդ խառնուրդի մէջ, գտնուած հունդերը նեխուելով, բարւոքվում ու աճում են, շատերն էլ մինչև փոսի մէջ աճելը ցրվում են գետնի վերայ ու այնտեղ բուսնում, որից գործարանը շրջապատող հողը ծածկվում է բուսականութեամբ և ձևացնում է իրենից մի բուսաբանական պարտէզ, ուր Ալկօտտը գտել է այն հողին օտար մօտ 36 տեսակ բոյսեր։ Շատ անգամ հունդերը, կպչելով ոչխարների բրդից, ճանապարհորդում են նրանց հետ երկրէ երկիր։

Բոյսերի գաղթականութեան պատճառներից մինն էլ նրանց հունդերի ցրուիլն ու սփռուելն է հողի վերայ։ Այդ առարկայի մասին «Bullentin de l'Institut d'Escex»-ում զետեղուած է մի շատ հետաքրքիր յօդուած, որը պատկանում է Մարի Պլումեր (Mariy Plumer) օրիորդի գրչին։ Հեղինակը հետևաբար ուսումնասիրելով այդ հարցը, ասում է, թէ հողմը հեռաւոր տեղերից բերում է իւր հետ շատ չորանալուց թեթևացած, թաղանթանման թևերով և փետուրներով ծածկուած, ինչպէս ղուշթուկ (пухъ) հունդեր։ Սաստիկ հողմերը տանում և ցրվում են հեռաւոր տարածութիւնների վերայ, մինչև անգամ բուսականին ծանր պտուղներ։ Հունդը, շնորհիւ իւր առանձնական կեղևի, կորչվում ու նետվում է բոյսից բաւականին հեռու։

Ուրիշ օրինակներ աւելի զարմանալի են։ Թոմաս Մեհանը (Thomas Mehan) հաղորդում է, որ անտառում զբօսնելու ժամանակ Hamamelis Virginica բոյսի հունդերը երեք մետր և աւելի հեռաւորութեան վերայ թափվում էին և դիպչում իւր երեսին, այնպիսի արագութեամբ և ոյժով, ինչպէս որսորդի հրացանից դուրս նետուած փոքրիկ կապարեայ գնդակներ։ Euphorbiacca կոչուած բոյսի առանձնական յատկութիւն ունեցող հունդից գոյանում է պտուղ, շրջապատուած 12—13 կեղևներով, որոնք չորանալով, երկու տեղից ճեղքվում են և դուրս են նետում իրենց միջից պտուղը։ Այդ պտուղի առանձնականութիւնը այնքան սաստիկ է, որ եթէ նրա կեղևները կապեն երկաթեայ լարով, դարձեալ դուրս կը նետեն իրենց միջից պտուղը։

Հեղեղները իրենց մէջ ընկած սերմերը տանում են դէպի հովիտները և կամ թափում են գետերի մէջ։ Անտառների մէջ հոսող մեծ գետերի վերայ երբեմն գոյանում են լողացող կղզիներ գոյացած ծառերի ճիւղերից, ճիւղերից և արմատներից։ Այդպիսի կղզիները շատ անգամ ծածկուած են լինում ճոխ և գեղեցիկ բուսականութեամբ, դարձեալ շնորհիւ հոսանքների և հեղեղների բերած հունդերի։ Իսկ այն գետերի մէջ, որոնք հոսում են դէպի հարաւ և հիւսիս, կլիման արգելք է լինում սերմերի աճեցողութեանը։ Յայտնի է, որ լողացող սառոյցները ևս բերում են իրենց հետ սերմեր։ Ծովային հոսանքները ևս այդ դէպքում մեծ դեր են խաղում։ Ծանր հունդերը և ամուր կեղևների մէջ գտնուած պտուղները կարող են լողալ ծովի վերայ, առանց փչանալու։ Կօկօսի ընկոյզները լողում են հնդկական ովկիանոսի վերայ և հասնելով Սումատրա կղզուն, այնտեղ աճում են։ Արևմտեան Հնդկաստանի լոբու զանազան տեսակները հասնում են մինչև Սկօտլիայի ափերը։ Մադագասկար և Մօրից կղզիների բուսականին խաչոր հունդերը պտտելով Բարեյուսոյ հրուանդանը, ընկնում են Ս. Հեղինէ կղզու վերայ, ուր կլիմայի լաւ ազդեցութեան տակ աճում են և երբեմն էլ բռնում են տեղական բոյսերի տեղը։ Եթէ խաղաղական ովկիանոսի կղզիները ծածկուած են կօկօսի արմաւենիներով, եթէ Բրազիլիայի և Գվինիայի ափերի բուսականութիւնը շատ նմանութիւն ունեն Կօնգօյի ափերի բուսականութեան հետ, պատճառը դարձեալ ծովային հոսանքներն են։ Սերմերի տարածման պատճառներից մէկն էլ գլխաւորապէս թռչչուններն են, որոնք տանում են իրենց հետ բազմատեսակ հունդերը և ցրվում են երկրագնդի զանազան հեռաւոր տեղերում։ Անձէտը պտուղների պաշար է հաւաքում, թաղելով նրանց հողի մէջ կամ պահելով ծառերի խոռոչներում։ Երբ անձէտը գաղթում է կամ սատկում է, հողի մէջ ծածկած հունդերը և պտուղները բուսնում են ու աճում։

Այս փաստը քաջ յայտնի է հնդկացիներին, նրանց մէջ ևս աւանդութիւն կայ, որ իբր թէ անտառները իրենց գոյութեամբը պարտական են անձէտներին։ Դարվինը հաստատում է, որ ձկների շատ տեսակներ պարզ ջրերում կերակրվում են հունդերով։ Ծովային թռչունները ուտում են ձկներին և այդ թռչունները հունդերը տանում են իրենց հետ շատ հեռաւոր լճեր և ջրեր։ Թռչունների ստամոքսում գտնուած հունդերը, ընկնելով հողի վերայ աւելի շուտ են բուսնում, ինչ-

---

Աննան մնաց քարացած. իւր առաջ կանգնած անծանօթը իւր ամուսինն էր, բայց նա այնքան էր փոխուած, որ անկարելի էր նրան ճանաչել։

—Դուք ուրուականն էք թէ կախարդ, ես ձեզ չեմ ճանաչում. սարսափելով հարցրեց խեղճ աղջիկը, բացատրեցէք, 'ի սէր Աստծոյ, ես խելագարվում եմ։

—Հանգիստ կացիր, հոգիս, վախենալու ոչինչ չկայ, ժպտալով խօսեց իշխանը, եթէ կարծում ես որ իմ մէջ մի փոփոխութիւն է կատարուել, այդ փոփոխութիւնը ոչ թէ ինչից է յառաջացել...Այս ասելով նա վերցրեց սեղանի վերայից իւր զանգրաւոր կեղծամը և դնելով գլխի վերայ շարունակեց.—Ցաւում եմ, էլի մինչոյն մարդն եմ. ուրեմն ինձանից վախենալու բան չունիս։

—Ա՛, կնշանակէ չինծու էին քո այդ գեղեցիկ զանգուրները, որոնց ես այնքան շատ սիրում էի. դառնութեամբ նկատեց Աննան։

—Նրանք բնականից աւելի արժեն, հոգիս. Պարիզի ամենանոր արտադրութիւն է սա, արդարացրեց իրեն իշխանը. և գիտես, երկու հազար ֆրանկ փող արժէ այս մի հատ կեղծամը և ամբողջ քանի տարի կարելի է գործածել նրան։

Աննան արհամարհանքով խռժռեց աչքերը. բայց հէնց այդ միջոցին էլ նա նկատեց նրա փաս ընկած ծնօտը և հարցրեց.

—Այս ինչ է. մի օրուայ մէջ դուք այդպէս նիհարեցիք։

—Ա՛յ անմոռուկս, դու ինձ չխոթեցի՛ր, հոգիս, ես խիկոյն կամենում էի մաքրել իմ ատամները և այնպէս դնել նրանց բերանումս, որ դու չտեսնէիր, բայց չեղաւ, մեղաւորը դու ես։

—Աստուած իմ, ձեր ատամներն էլ ուրեմն արուեստական են, հապա բընական ինչ մնաց ձեզ, պարոն, սարսափահար բացագանչեց Աննան։

—Մի ծնօտս, միայն մի ծնօտս, թէ չէ միւսը բոլորովին առողջ է. հանգստացնում էր իշխանը ամուսնուն. բայց վերջինս զզուանքով յետ դարձրեց երեսը և ուղղուեցաւ դէպի դուռը։ Իշխանի չար բաղտից աթոռի վերայ ընկած էր և իւր կօրսեար, որով նա սեղմում է իւր իրանը և որը Աննայի աչքերին ընկնելով նրա ուշադրութիւնը գրաւեց։

—Սա ինչ բան է, վերցնելով նրան հարցրեց Աննան։

Իշխանը կեղծեց իբր թէ մի ինչ որ բան է պտրտում և իրեն չէ լսում։

—Ձեզ եմ հարցնում, պարոն, սա ինչ բան է, կրկնեց նա իւր հարցը։

—Թողէք, խնդրեմ, դա իմ մէջքի հիւանդութեան համար է պատուիրել բըժիշկը, թողէք, դա մի առանձին հետաքրքրական բան չէ, պատասխանեց իշխանը։

Այս բոլորից յետոյ Աննայի համար լուծուեցաւ և այն հանելուկը, թէ ինչու ամուսինը իւր առաջատից հեռու է փախչում։ Նա մի փոքր ժամանակ մտածմունքի մէջ ընկաւ, ապա յետ դառնալով կանգնեց իւր ամուսնու առաջ և աչքերը ուղղակի նրա աչքերին սևեռելով զայրոյթից դողացող ձայնով խօսեց.

—Պարոն, եթէ դուք ոչ այլ ինչ էիք, եթէ ոչ մի կատարեալ աւերակ, ինչու համար էիք ինձ դժբաղդացնում. մեթէ դուք այնքան խիղճ չունեցաք, որ խնայէիք գոնէ իմ երիտասարդ հասակը...

—Ես այդպէս վատ կարծիք չունիմ իմ մասին, տիկին, ցինիկական անտարբերութեամբ պատասխանեց իշխանը. ես դեռ յոյս ունիմ որ կարող եմ կազդուրուել. ինձ բժիշկները իրենց խորհուրդ տուին ամուսնանալ. ուրեմն 'ի զուր էք դուք վշտացնում ձեզ. մի փոքր համբերութիւն է հարկաւոր։

—Դուք դեռ համարձակվում էք բերան բանալ, պարոն, եթէ ամեն բարեմասնութիւններից թափուր էք, գոնէ կեղծեցէք որ մի փոքր ամօթխածութիւն ունիք. դառնութեամբ նըկատեց Աննան։

—Ինձանից մի նեղանաք, տիկին, ես ձեզ չեմ զրկում ոչ մի բանից, ինչ որ ես ունէի, այն ձեզ է պատկանում։ Ձեր ծնողները ցանկանում են ձեզ իշխանուհի տեսնել և ահա այդ կոչումը ես ձեզ եմ նուիրում. օգտուեցէք իմ պատուանունից, որքան կարող էք, իսկ միւս բարիքների համար խնդրեմ ինձ ժամանակ տուէք, ես առ այժմ ոչինչ չեմ խոստանում. մի փոքր համբերեցէք, գուցէ բժիշկների գուշակութիւնը կատարվում է...

—Դուք մի ամենաստոր արարած էք, պարոն, ամօթ է այլ ևս տանել ձեր ներկայութեամբը... զզուանքով պատասխանեց Աննան և դուրս գնաց։

Հետևեալ օրը իշխանուհին արդէն իւր հօր տանն էր։

Մի քանի օրից յետ Վարդուհին և Տիգրանը իբրև նորապսակներ գնացին իշխան Շահմելիքեանի տունը, Աննային այցելելու։ Բայց տան ծառայից իմանալով որ նա արդէն հօրանց տանն է վերադարձել նրանց մօտ։

Տիկին Լազարեանը ընդունեց նըրանց պարզ ու պատշաճ յարգանքով, բայց Աննան դուրս չեկաւ նրանց մօտ։ Վարդուհին չը կամեցաւ պատճառը հարցնել, կարծելով որ Տիգրանի հետ տեսնուելուց է խուսափում։ Բայց երբ նրանք ցած իջան փողոց, նրանց ճանապարհակցող ծառան մի փոքրիկ տոմսակ յանձնեց Վարդուհուն, որի մէջ Աննան գրել էր հետևեալը.

«Սիրելի Վարդուհիս.

Մի վշտանար, որ ես չը կամեցայ տեսնուել քեզ հետ, որովհետև տեսնուելու և խօսակցելու սիրտ չունիմ. իմ մօր փառամոլութիւնը ինձ գլորեց դժբաղդութեան անդունդը և ես կամենում եմ այստեղ էլ վերջացնել իմ կեանքը. մնաս բարով, երջանիկ եղիր, և սիրիր քո Տիգրանին...

Քո դժբաղդ Աննա»։

Մի քանի ժամանակից յետ ամեն գաղտնիք արդէն պարզուած էր հասարակութեան համար և գիտէր թէ ինչ գնով է հայ օրիորդը—անպատճառ իշխանուհի դառնում։

Մուրացան.

պէս օրինակի համար օմելա բոյսը։ Անգլիական ընագէտի կարծիքով magnolia glauca Անգլիա բերած բոյսի սերմերը այն ժամանակն են միայն աճում, երբ մտնելով թռչունի ստամոքսի մէջ, ենթարկվում են մարսողութեան գործողութեան ներքոյ։ Թռչունները գաղթականութեան ժամանակ տանում են այդպիսով սերմերը զանազան կլիմաներ։ Փետուրներից կամ մագիլներից կպած հողի կտորները չատ են նպաստում հունդերի աճեցողութեանը։ Դարվինը հաղորդում է, թէ վիրաւորած կարմիր կաքաւի մագիլներից պոկած հողի կտորը երեք տարի ապակեայ ծածկոցի տակ մնալուց յետոյ, երբ սկսեցին նրան ջրով թրջել, աճեց և տուաց 82 տեսակ բոյսեր։ Փոքրիկ լճակի յատակից երեք թէյի գդալաչափ վեր առած տիղմը, բարձրելուց յետոյ, վեց ամսուայ ընթացքում տուաց 537 տեսակ բոյսեր։ Այդպէս ուրեմն զանազան տեսակ պայմաններ նպաստում են տիեզերքի ամեն կէտերում բոյսերի բազմանալուն և աճեցողութեանը և զանազան տեսակ կլիմա ունեցող հեռաւոր երկիրները փոխվում են միմեանց մէջ հունդերով։

«ՆՈՐ ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՍԻՍԱՑԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 Յունվարի

ԼՕՆԴՕՆ. Այսօր, կէս օրից յետոյ, անգործ մնացած բանուորները Տրաֆալգարտ կոչուած թաղում կազմեցին մի սոցիալ-դեմոկրատիկան դաշնակցութիւն։ Ժողովում վճռեցին միջոցներ որոնել չքաւորութիւնը պակասեցնելու համար, նա և բանուորների համար բնակարան շինել և պակասեցնել նրանց աշխատութեան ժամերի թիւը մինչև ութ։ Խօսուեցան վրդովեցուցիչ ճառեր դրամատէրերի դէմ, հրաւիրելով բանուորներին դէպի սոցիալ-յեղափոխութիւնը։ Ճարտասաններից մինը բացեց կարմիր դրօշը և հրաւիրեց բանուորներին հետևել դաշնակցութեանը, որը նրա կարծիքով տեղի կտայ նրանց յարձակուելու Լօնդօնի Վեստ-Էնդ կոչուած մասի վերայ և յափշտակութիւն գործելու, եթէ կառավարութիւնը օգնութիւն չանէ բանուորներին։

ԼՕՆԴՕՆ. Պատգամաւորների ժողովի նիստը յետաձգուած է մինչև փետրվարի վեցը։

ԲԷԼԳՐԱԴ. Միլան թագաւորը մտադիր է գնալու Վեննայ, գործերի դրութիւնը պարզաբանելու համար։

Կ. ՊՕԼԻՍ. Մեծ պետութիւնների դեսպանները առաջարկել են Բ. Դրան Բուխարեստում Սերբիայի հետ ունեցած բանակցութիւնների ժամանակ ի նկատի ունենալ հետևեալ կէտերը. պահպանել Բերլինի դաշնագրութիւնը, չը պահանջել Սերբիայից պատերազմական ծախք, չը նորոգել արևելեան-ռումելիական հարցը, ինչպէս մի ներքին հարց և բանակցութիւնների հետևանքի մասին յայտնել պետութիւնների ներկայացուցիչներին։

ԲՈՒԽԱՐԵՍՏ. Թուրք-բուլղարական համաձայնութեանը բոլոր պետութիւնները հաւանութիւն յայտտուին, բացի Ռուսիայից։ Բ. Դուռը յոյս ունէ, որ պետութիւններին կը յաջողուի համաձայնեցնել և Ռուսիային։ Հաւատացնում են, որ այդ մասին ամենից շատ աշխատում է Գերմանիան։

28 Յունվարի

ՄՈՍԿՎԱ. Երեկ երեկոյեան մեռաւ սրտի պայթումից «Руссъ»-ի հրատարակիչ Ակսակովը։

ՕԴԵՍՍԱ. Ծանդարմեայի կապիտան Գիտէուի սպանութեան գործի երկրորդ անգամ քննութեան ժամանակ յանցաւոր հանաչուեցաւ լակէի Պովալսկին, որ դատապարտուեցաւ տասնչորս ամեայ տաժանակիր աշխատանքի։

ԲԷԼԳՐԱԴ. Գերմանական դեսպանը յայտարարեց Գարաշանին, որ Գերմանիան միանում է Ռուսիայի Բուխարեստում տեղի ունեցող բանակցութիւնների սահմանափակման վերաբերութեամբ ուղարկուած ծանուցագրին։ Այսպիսով այդ ծանուցագրին համաձայնուել ենբոլոր պետութիւնները։

ԲՈՒԽԱՐԵՍՏ. Մինչև Մադժէտ-փաշան կրտսանայ իւր իրաւանց թղթերը, դելեգատները կը շատանան մաքերի փոխանակութեամբ և նիստերը պաշտօնական չեն համարուիլ։

ԱԹԷՆՔ. Յունական կառավարութիւնը պնդում է իւր պահանջների վերայ։ Հասարակաց կարծիքը միաձայն պաշտպանում է այդ. պատերազմական պատրաստութիւնները շարունակվում են։

ՀՌՈՄ. Պատգամաւորների ժողովում արտաքին գործոց մինիստրը յայտարարեց, որ Իտալիան յունական խնդրում կը գործէ ինչպէս միւս պետութիւնները, ուրիշ բացատրութիւններ չը տուաւ մինիստրը։

ԼՕՆԴՕՆ. Տրաֆալգարդ-սկվերում տեղի ունեցած միտինգից յետոյ, մի քանի հազարից բաղկացող ամբոխը առաջ խաղաց դէպի Լօնդոնի հարուստ թաղերը, ճանապարհին սարսափելի աւերումներ գործելով. գրեթէ բոլոր տների պատուհանները կոտրատուած են, շատ խանութներ կողոպտուած. առանձին կորուստ կրեցին թանգագին իրեղէնների խանութները։ Ոստիկանութեանը դժուարութեամբ յաջողուեցաւ կարգը վերականգնելու։ Շատ ձերբակալումներ տեղի ունեցան։

ՊԱՐԻԶ. Սենատը որոշեց. համալսական սկզբնական դպրոցների դասաւորութիւնը բացառապէս պէտք է աշխարհականների ձեռքումը լինի։

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ц. 2077) 50—1

ПРЕМІЮ „РАДУГИ“
„ЮДИѲЪ“
Въ настоящее время можно видѣть въ Тифлисѣ въ театрѣ.
(Ц. 2856) 1—1

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. մէջը։

Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ։

Կիրակի, փետրուարի 2-ին 1886 թ. Թիֆլիսի ծաղովարանում տեղի կունենայ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Յօգուտ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան

Տոմսակների գինն է՝ կանանց 1 ր. տղամարդկանց 2 ր.

Սկիզբն է երեկոյեան 9 ժամին։ Տոմսակները վաղօրոք կարելի է ստանալ պ. Ծատուրեանի խանութում, կենդրոնական գրավաճառանոցում, Շահվերդեանի լրագրական գործակալութեան գրասենեակում և Թիֆլիսի ծաղովարանում։

4—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆԸ

Հրաւիրում է առաջիկայ փետրվար ամսի 7-ին առաւօտեան ժամի 12-ին, վարչութեան շինութեան մէջ այն անձանց, որոնք կցանկանային առնել քաղաքային ջրանցքի շինութեան հողային աշխատութիւնները։ Պայմանները կարելի է տեսնել ամեն օր վարչութիւնում 10 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ։

3—3

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА 1886 ГОДЪ
НА ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ХУДОЖЕСТВЕННО-ЛИТЕРАТУРНЫЙ СЕМЕЙНЫЙ-ЖУРНАЛЪ „РАДУГА“.

Богатая программа, 99 безплатныхъ литературныхъ и музыкальныхъ приложеній, какъ и въ предъидущемъ году. Кромѣ того, великолѣпный стѣнной календарь, печатаемый 10-ю красками на золотомъ фонѣ, и превосходная премія,—роскошная картина „ЮДИѲЪ“.
Подписная цѣна въ годъ съ пересылкою 5 рублей.
Допускается разсрочка: 2 р. при подпискѣ и затѣмъ 3 мѣсяца къ ряду по 1 р.
Адресъ: Редакція журнала «Радуга», Москва, Столешниковъ пер., д. Корзин.
5—5

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԶԻՆԳԵՐԻ
Նիւ-Եօրկում



ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԻԱԿ ՊԱՀԵՍՏՐ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՒՄ Է ԴՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏՈՒՄ ՄԻՐԻՄԱՆՈՎԻ ՏԱՆԸ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԱՇԽԱՀԻՍ ՎԵՐԱՅ

ՈՐԸ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ԱՄԵՑԵՐԴԱՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՈՒՆ

Միակ ամենաբարձր պարգևը պատուաւոր դիպլօմ

Մօտ օրերում ստացայ մեծ քանակութեամբ և աւելի կատարելագործուած զանազան տեսակ արհեստաւորների և ընտանեկան կարեմեքենաներ իրենց օգնական նոր գործիքներով և նոր ոտներով, որոնք առանց աղմուկի թեթևութեամբ բանում են, այնպէս որ ամենաթոյլ մարդիկ և ծերունիներն անգամ, առանց ոյժ գործ դնելու կարող են գործածել։ Այս մեքենաներից 1883 թ. ԾԱԽՈՒԵՑԱՒ մօտ 700,000 հատ, այնպէս որ անցեալ տարում աւելի շատ ծախուեցաւ քան թէ 1882 թուականում։ Սա ամենալաւ ապացոյցն է թէ ինչ լաւ յատկութիւն ունին ԶԻՆԳԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ։

Նախազգուշութիւն. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ համբաւ ունին, որովհետև իրենց գեղեցիկ յատկութիւններով և յարմարութեամբը զմայլեցնում են ամենքին և հէնց այդ է պատճառը, որ ուրիշ գործարանատէրերը կեղծում են և Զինգերի իսկական մեքենայի անունով ծախում։ Այդ պատճառով անհրաժեշտ է դարձնել ձեր ուշադրութիւնը նրա վերայ, որ Զինգերի իսկական կարեմեքենաներից իւրաքանչիւրը կրելով անգլիական լեզուով «Մանուֆակտուրական Ընկերութեան Զինգերի» Ֆիրման մեքենայի կսթի և մամուլի վերայ դրոշմուած են վերը դրած գործարանական մարկաները։ Զինգերի իսկական և օգտաւէտ կարեմեքենաները որ իւրաքանչիւր մարդ կարողանայ հեշտութեամբ ձեռք բերել, գնողները կարող են եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել, այն է՝ շաբաթը 1 ր. 50 կ. կամ ժամանակամիջոց ստանալ դրամը վճարելու համար, առանց իսկական գինը բարձրացնելու։ Հին մեքենան մագազինում կարելի է փոխել։ Մեքենաները ունին նոյնպէս իրենց պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս, մեքենայ և այլն և այլն։

ԹԻՖԼԻՍ, Գ. ՆԷՅԳԼԻՆԳԵՐ, ԴՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՈՎԻ.

Բաժանումներ. ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ, Ալէքսանդրեան փողոցի վերայ, տուն Զերէկովի, բուլվարի հանդէպ։ ԲԱԳՈՒԻ մէջ, Միքայէլեան փողոց, տուն Միրզա-Սաադովի։ ԲԱԹՈՒՄ, Պոլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-օղլի։ Այս մեքենաների մշտական պահեստները գտնվում են նաև Ղարս, Ելիսաւէտապոլ, Ալէքսանդրապոլ, Շուշի, Պետրովսկ, Ախալքալաք և Երևան քաղաքներում։

60—46

Дозволено цензурою. Тифлисъ, 28-го Января 1886 г. Տպարան Մ. Դ. Ռոտինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К-° Гол. пр., д. № 41.